ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025/2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Դունյա Սարգսյան 10.04.2025 21:38:58	Իմ կարծիքով համաչափ և հիմնավոր բաշխումը կարող է խթանել գիտական հետազոտությունների ոլորտում երիտասարդների ներգրավվածությունը, բարձրացնել գիտական աշխատանքի որակը և նպաստել գիտության և տնտեսության կապի ամրապնդմանը:	Ընդունվել է ի գիտություն: Նախագիծը պատրաստելիս հաշվի են առնվել պետական մարմիններից, բուհերից և գիտական կազմակերպություններից ստացված առաջարկները, ինչպես նաև հետազոտության թեման և բովանդակությունը:	
2	Գեղեցիկ Վարդանյան 05.04.2025 20:09:53	Նախագծում ապահովել ասպիրանտուրայի տեղերի բաշխման ավելի արդար և թափանցիկ մեխանիզմ՝ հաշվի առնելով ոլորտի զարգացման ռազմավարական առաջնահերթությունները և բարձր գնահատված գիտական կառույցների	Ընդունվել է ի գիտություն: Նախագիծը պատրաստելիս հաշվի են առնվել պետական մարմիններից, բուհերից և գիտական կազմակերպություններից ստացված առաջարկները, ինչպես նաև	

		մասնագիտական ներուժը:	հետազոտության թեման և բովանդակությունը:	
3	Արևիկ Մարտիրոսյան 28.03.2025 19:00:20	Կարծում եմ ՀՀ կառավարության այս ծրագրով պետության համար առաջնային և կարևորություն ունեցող ոլորտները (ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական տեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական գիտություններ), ինչպես նաև բուհերի և գիտական կազմակերպությունների ամբիոնները համապատասխան մասնագետներով կապահովվի, որն էլ կնպաստի վերը նշված մասնագիտությունների զարգացմանը: Ցավոք, այս օրերին դպրոցները՝ հատկապես մարզային, ունեն այս մասնագետների կարիքը: Առաջարկում եմ ոգևորել և նպաստել այս մասնագիտությունների զարգացմանը հատկապես մարզային դպրոցներում:	Ընդունվել է ի գիտություն: Նշված հարցը սույն որոշման նախագծի կարգավորման առարկա չէ: Միաժամանակ, դպրոցները համապատասխան մասնագետներով ապահովելու նպատակով բուհերին հատկացվել են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղեր՝ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությամբ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելություն իրականացնելու համար:	